կոխ տուեց Մահամմեդի տասնաբանեայ պատվիրաններից մէկը և անուշ արեց արաղը։ Բրօն, տաքացած ոգելի ըմպելիքով, ինձ շատ հետաքրքրական պատմութիւններ արեց Մասիսների քարայրների մասին, որոնց մէկը ես յարմար եմ համարում այստեղ յիշելու։

Սովից առաջ, ասում էր Բրօն, Մասիսների այրերը բոլորը լիքն էին քուրդ բնակիչներով, որոնք ձմեռելու էին գալիս այստեղ։ Ես անդադար գնում գալիս էի իմ ծանօթների մօտ։ Մի անգամ մի անծանօթ քարայրի պատահեցայ և ներս մտայ այնտեղ. ես գտայ մեծ քանակութեամբ ղեստների կտորներ իրար վերայ դարսած և գրած մագաղաթի կտորներ, գրքեր։ Գրքերը ինձ պէտք չէին, ես ձեռս տարայ ղէպի ղեստեղէնները, որ Նրանցից օգուտ քաղեմ, բայց ափսոս, որ նրանք ափիս մէջ մշրվեցան*) և հող դարձան։

«Չես կարող այժմ ցոյց տալ ինձ այդ այրը», հարցրի ես։

—«Ոչ», պատասխանեց Բրօն, «այդ այրը գըտնելու համար մի շարաթ պէտք է մանդալ, այժմ ձմեռն է, այս ձորերը շատ անգամ ամբողջ շաբաթներով ծածկվում են մշուշի տակ, նոյն իսկ

---

*) Ծանօթ. Մշրելը Վանեցիք գործ են ածում փուխր առարկաների մանրելուն, ինչպէս փշրելը գործ է ածվում կարծր առարկաների համար։